

ՈՒՐՈՒԱԳԻՑ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ



Գրեթէ քսանուհինգ տարիէ ի վեր հիմնական քննութիւններ կատարուեցան հայ մատենագրութեան վրայ, և գրեթէ նոյրքան տարիէ ի վեր անոր պատմութիւն մը չունինք, համառօտ կամ ընդարձակ: Մենք չենք կարծեր դեռ ունենալ դիւրութիւնները ամբողջական պատմութիւն մը գրելու, բայց կրնանք անոր ուրուագիծ մը տալ՝ այնքան որ իրաց ընթացքը բացատրել:

Այս Ուրուագծին մէջ մենք ուշադիր եղած ենք մանաւանդ ներկայացնել Հայոց մատենագրութիւնը իր հոսանքներուն մէջ այնպէս ինչպէս որ իրարու յաջորդած են. և գտնոնք հետեւցնել ըստ ամենավերջին քննութեանց անոնց համեմատ՝ որոնք մեզի ամենէն աւելի իրականին մօտ հրեցեր են:

ԽՄԲ.

Ա.

ՆԱԽԱՔԻԽՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԶԱՆ

Երկիրը. — Երևոյթը. — Կլիման. — Ժողովուրդը. — Բարքերը. — Լեզուն. — Մատենագրական սկզբնաւորութիւններ (Բնեւագիր, զրոյց). — Զարթուիմ ազգային զգացման. — Մեկնեալ հաւրատութիւն մը. — Գողթան երգիչներ. — Առաջին գրական զործեր (Կրօնական երգեր, պատմական երգեր). — Հելլենական ազդեցութիւն. — Պարթև. — պարսկական ազդեցութիւն. — Արքունական և մեհնական դիւանները. — Յոյսք. — Միմունջը:

Հայաստանի աշխարհագրական հաստատուն զաղափար մը Մեծն Տիգրանի ատեն զարգացաւ: Իր սահմաններն էին հարաւէն՝ Տաւրոս լեռները որ զայն Միջագետքէն կը բաժնէին, արեւելքէն՝ Ստրպատական, հիւսիսէն՝ Կասպից ծովուն լեռները, վերջն ու Կաւկասը, արեւմուտքէն՝ Պոնտոսի լեռները, փոքր Հայքն ու Եփրատը:

Այս սահմաններուն մէջ ամփոփուած երկիրը յետագայ ազգային և օտար պատմիչներէն նկատուեցաւ Հայոց պատմական հայրենիքը:

Հայաստանի երեւոյթը շատ անհաւասար է: Ընդհանրապէս բարձրավանդակ է ու լեռնոտ: Ամբողջութիւնը կը կազմէ լեռնակղզի մը: Լեռներ որ շուրջ կը պատեն դաշտ մը մինչև իր վերջի սահմանները. յետոյ դարձեալ ուրիշ լեռներու շարք մը՝ որ կը պատեն ուրիշ դաշտ մը:

Լեռներու ու դաշտերու այս փոխի փոխ յաջորդութիւնը ստէպ կը ձեւացնեն կիրճեր, ձորեր, հովիտներ, տափեր ու ծմակներ հիմնալի գեղեցկութեամբ ու արդիւնքով: Գեղեցիկ լիճներ ունի, ինչպէս Վանին ու Սեւանին, և գետեր՝ ինչպէս Եփրատն ու Երասխը: Իր շատ լեռները մերթ տարւոյն ամբողջ եղանակները ձիւնով ծածկուած կ'ըլլան: Սար համար ալ իւրաքանչիւր հովտի ու դաշտի մէջ քանի մը վտակ կը վազէ որ մեծ ջուրերուն օժանդակները կ'ըլլան: Իր ամենէն բարձր լեռն է սպիտակափառ Մասիսը, իր երկհիղ զագաթով որ, կարծես, բարձր կը բռնէ մեր երկրին երևոյթը:

Երկրին կլիման շատ զանազանաւ է իր այլ և այլ կողմերուն մէջ: Զմեռը շատ ցուրտ ունի և իր ամառը տեղ տեղ տօթակէզ է, մինչ իր բարձրաւանդակներու վրայ, ընդհակառակն, զովութիւնը աւելի քան զարնանային է:

Պարապուած իր լեռներովը և խափաշուած իր երկաթատեւ ու խիստ ձմեռնեւրովը, կեանքը մեր երկրին մէջ կրկնապէս կղզիացած է, ինքն իր մէջ և օտարներուն հետ: Քովի գաւառը երթալու համար՝ անպատճառ լեռ մը պէտք է կտրել անցնիլ. և դրացի երկիրը երթալու համար լեռներու ամբողջ շարք մը:

Ոչ մէկ ծով իր սահմանները չիթընջեր: Հայաստանի մէջ տիրող հնազոյն ծովալուրդ, զոր պատմութիւնը կը յիշէ, հայ անունը չունի: Նա կը կոչուի Խաղի: Արձանագրութեանց մէջ կայ որ Խաղիի Գրիստոսէ ինն դար յառաջ վանայ Լճին

ափերուն վրայ պետութիւն ունէին՝ Իրենց երկիրը իրենցմէ կը կոչուի Բիաինա, իսկ ուրիշները կը կոչեն Ռւրարտու։

Ասոնց պատմութենէն մինչև հիմայ գիտենք միայն անոնց թագաւորներուն անունները և քանի մը գործերը։ Այսպէս կը յիշուին Սարգուր Ա. որդի Լուսիւ պրիսի։ Արամէ՝ հակառակորդը Սարգմանասարի Բ. (860—824). Սարգուր Բ. Սարգմանասարի Բ. թագաւորութեան վերջերը իսպուրիսիա՝ հակառակորդը Սամարտամանի Դ. 824—811, Մինուասի, Արգիստիս Ա. Սարգուր Գ. Ասուրնիրարի և Տիգզատպիւ դեաների հակառակորդը. Ռուսաս՝ հակառակորդը Սարգոնի Բ. 722—705. Արգիստիս Բ. հակառակորդը Սարգոնի և անոր յաջորդին Սանհերիբի (705—681) Ռուսաս Բ. որդի Արգիստիսի Բ. Թոռ Ռուսասի Ա. Ասասըհադոնի ատեն։ Սարգուր Դ. Էրիմնէաս, Ռուսաս Գ. Ասուրբանիւրադի ատեն 668—626, և վերջէն մինչև գրեթէ 585 իշխող Խաղտեայց պետութեան վրայ։

Այս պետութեան սկզբնաւորութիւնը դեռ շատ մութ է։ Պետութեան անունը առաջին անգամ կը յիշուի Ասուրբանիպադի ատեն որ Սուրնատի ակնադրիւրէն մինչև Ռւրարտու գտնուող երկիրները նուաճած ըլլալուն վրայ կը պարծի։

Պետութեան ամայրաքաղաքն է ըստ ասորեստանեայ սեպագրութեանց Արգաշիւն՝ Խաղտեայց Արամէ թագաւորին օրով։ Սարգմանասարի Բ. ատեն՝ (860—824) որ շատ անգամ Ռւրարտուի վրայ յարձակած է, իսկ իսպուրիսի Մինուասի և յաջորդ թագաւորներուն քիչ մ'աւելի յետնագոյն Խաղտեան արձանագրութիւնները Բիաինա (առաջին անգամ Մինուասի օրով յիշուած) պետութեան ու երկրին իբր ամայրաքաղաք նշանական Տուշուա քաղաքը։

Սարգմանասարի Բ. ատեն Ռւրարտաքիչ ունէին միայն Վանայ լճին շրջակայքը գտնուող երկիրը, երկիր մը որ իր մէջ կ'ամփոփէ Հայոց վերջէն Տուրուքերան կոչած նահանգը և Վասպուրականի մէկ մասը։

Ռւրարտուի պետութիւնը փորքէն սրկսեւով շուտով մեծցաւ, ու քիչ ատենէն Ասորեստանի ամենէն կարեւոր ուսումնական եղաւ։ Թէև ասորեստանեայ տեղեկութեանց համեմատ Ռւրարտու բազմաթիւ պատերազմներու մէջ Ասորեստանցիներէն յաղթուեցաւ ու խորտակուեցաւ, սակայն ամէն անգամ նորէն ուժովցաւ, և իր սահմանները, ինչպէս որ խաղտեական բեւեռագրութիւններն ու անոնց գտնուած տեղերը կը ցուցնեն, հզօր իշխաններու ինչպէս Մինուասի, Արգիստիսի Ա. Սարգուրի Գ. Ռուսասի Ա. և Ռուսասի Բ. օրովը շատ ընդարձակեց զէպ ի հիւսիս, արևմուտք և հարաւ։ Մերթ, զէպ ի հիւսիս, հասաւ մինչև Սևանայ Լիճն, Երեւան և Կարս, զէպ ի Արևմուտք մինչև Մեծիտինէ, զէպ ի հարաւ — արեւելք մինչև Ռւրմիոյ Լճին հարաւային ափունքը։ Ռուսասի Բ. օրովը ալ, որ թոռն էր Սարգոնի 714ին յաղթուած ու անձնասպան եղած Ռուսասի Ա. նոյն տէրութեան սահմանը դարձեալ զէպ ի հիւսիս կը հասնէր մինչև Ալեքսանդրապոլի դաշտը, զէպ ի արևմուտք մինչև Եփրատ, ուր Մուսաց և Հատեանց հետ գործ ունեցաւ, զէպ ի հարաւ — արեւելք մինչև Մանեաններն ու Լուրնները, զէպ ի հարաւ մինչև Շուպրիա երկիրը, ուր Ռուսաս Բ. Ասասըհադոնի հետ ընդհանրում ունեցաւ։

Ետոյ Ռւրարտու կ'անհետանայ պատմութենէն է դարուն վերջերը երբ Կիմմուրացիք ու Սկիւթացիք յառաջակողման Ասիա մտան և Մարաց պետութիւնը մեծցաւ, որ Կիարքարի առաջնորդութեամբ 606ին Նինուէն կործանեցին և Ասորեստանն ու Խաղտեայց և Հատերու յառաջ գրաւած երկիրները գրաւեցին և իրենց ալ իրենց կարգին Պարսից Կլիւրոս թագաւորէն նուաճուեցան։

Այս խառնաշփոթութեանց միջոցին է որ օտարները Ռւրարտուի հողերուն վրայ առմեկի անունով ցեղ մը կը ճանչնան և երկիրն ալ անոր անունով կը կոչեն Արմեկիս։ Եւ ասոնք անուններն են որ ան-

կէ ի վեր ոչ հայ ցեղերը կու տան հայ ժողովուրդին և իրենց երկրին:

Ուրարտացւոց բարքերը կրած են ասորեստանեան բարքերու ազդեցութիւնը: Այն արուեստներն որ իրենց քով զարգացեր են նոյն գիծերն ունին ասորեստանեայց մօտ ի ծաղկի եղած արուեստներուն հետ, ինչպիսիք են ժայռաշինութիւն, քարակոփութիւն, պղնձի և իւնցիի կահերու գործածութիւնը: Եւ իբր ամենէն ցայտուն գիծ ասորեստանեան ազդեցութեան՝ անոնցմէ առած են իրենց գրելու կերպը՝ սեպագրութիւնը: Իրենց մատենագրութեան մեզի հասած են արձանագրութիւններ՝ որոնք կը գտնուին վան, Էրեւան և մինչև Մելիտինէ և Ուրմիա: Իրենց լեզուէն գիտենք միայն քանի Պր անձանց ու տեղւոյ առնուներ:

Իրենց արձանագրութիւնները թէ և կարգացուած՝ բայց շատ վիճուած թէ ինչ լեզուի կը պատկանի:

Իբր ստույգ կը համարուի որ ոչ հնդեւրոպական և ոչ ալ հայերէն է հետեւաբար: Բայց իրենց լեզուի տարբերքներէն ամենէն աւելի հայերէնի մէջ կը գտնուին: Իրենց արձանագրութեանց տուած պիտի ըլլան ասորեստանեան արձանագրութեանց ձեւը՝ որ մեզի, գրեթէ երեք հազար տարի վերջ կարդացողներուն, ամբարտաւան և գրեթէ անհասկնալի կ'երևի: Կը յիշուի որ զոյցներ պահուած ըլլան իրենց վրայ Հայերուն մէջ՝ որ իրենցմէ վերջ կը յայտնուին իրենց հոգին վրայ:

Հայերը՝ հագիւ յերևան եկած Հայաստանի մէջ, Պարսից ազդեցութեան տակ կ'երևին: Պարսիկները երկիրը երկու սատրապութեան կը բաժնեն արեւելեան և արեւմտեան՝ Քսենոփոնի Հայաստանէն անցած միջոց 401/400, արևմտեան բաժնին սատրապն էր Տիրիբազ, իսկ արեւելեան Հայաստանի մէջ սատրապութիւնը ժառանգական էր Որոնտէսի ընտանեաց մէջ: Կը յիշուին քանի մը Որոնտէսներ նոյն ընտանիքէն: Որոնտէս մ'ալ Հայոց վերջին սատրապն էր Անտիոքոս Մեծի (223 - 187) Հայաստանի տիրելէն յառաջ: Երբ

Անտիոքոս Հռոմայեցւոց դէմ կը պատերազմէր, իր երկու զօրավարները, Արտաշէս և Զարիադրիս Հայաստանը երկու մասի բաժնեցին և Թագաւորին յանձնարարութեամբ անոնց վրայ իշխեցին: Բայց Անտիոքոսի պարտութիւնէ հտը՝ յաղթական Հռոմայեցւոց կողմէ անցան, և Թագաւոր անուանուելով՝ յառաջ տարին իրենց իշխանութիւնը կատարեալ անկախութեամբ:

Հայեր ի սկզբան փոխզական բարքեր ունեցած են իրենց հագուելու կերպին և իրենց գործածած զէնքերուն մէջ: Հագիւ խաղիւններուն հոգերուն վրայ յատնուած, միանգամայն կ'իյնան ազդեցութեան տակ ինչպէս Պարսից իշխանութեան նոյնպէս և բարքերուն: Իրենց քով հաստատուն հետքեր կը ձգեն խաղիւններէն քանի մը գիծեր, տեղերու անուններ՝ ինչպէս վան, Տոսպ, Արճէշ, ցեղերու անուններ, ինչպէս Մանաւազեանք, Ռշտունիք: Խաղիւններու լեզուն Հայոց ականջներուն անախորժ և խժական հնչած է, և այնուհետեւ ամէն բարբարոս լեզու հայերը կը կոչէին խաղտալոյր:

Հայոց լեզուն յառաջ եկած է հնդեւրոպական մայր լեզուէն: Փոյրաթիւ է Հնդեւրոպաց, Պարսից, Ռուսաց, Գերմանացւոց, Յունաց, ու Հռոմայեցւոց լեզուներուն: Դարերու ընթացքին մէջ կը զատուի անոնցմէ և ձայնաւորներու առանձին դրութեամբ մը կը զարգանայ: Ճիշդ չգիտցուի արդեցութեան աստիճանը զոր կրած են իրենց այն ժողովուրդներէն որոնց հետ աղերներ ունեցեր են: Մինչև Արտաշիասի անկախ Թագաւորութիւնը օտար ազդեցութիւններէն ամենէն աչքի զարնող տարրն է պարսկերէնը իր հին ձեւով: Խաղիւններին արդեցութեան աստիճանը դեռ անծանօթ է, քանի որ դեռ չեն լուծուած խաղիւններու արձանագրութիւնները:

Սատրապներու կառավարութեան տակ ազգային զգացման դեռ գիտակցութիւնը չկայ կարծէք: Անոնք երգած են ինչպէս միւս բոլոր ազգերը, բայց իրենց երգերը սիրոյ, որսորդութեան և անդէրդական

երգեր եղած ըլլալու են։ Եւ կրնան երգած ըլլալ հաւասարապէս թէ հայերէն և թէ պարսկերէն, զոր ամէնքն ալ կը հասուցանային, մինչև անգամ գիւղացի կանայք ու աղջիկներ։

Բայց Արտաշիաս կու գայ և ամէն բան կը փոխուի ազգային զգացումներուն մէջ։ Կամքի այս մարդը ոչ միայն գոհ չեղաւ անկախ պետութիւն մը հիմնելով, զայն ընդարձակելով իր շրջակայ աշխարհներէն շատերը աշխարհակալելով, այլ ուզեց նաև զանոնք ապահովել, զանոնք հայացնել և հայութիւնը զօրացնել։ Հրաման հանեց որ իր պետութեան մէջ ամէնքն ալ հայերէն խօսին։ և եթէ չյաջողեցաւ զամէնքն ալ հայացնել, բայց կըցաւ այնպէս ընել որ ամէնքն ալ հայերէնը հասկնան և խօսին իրբև տէրութեան լեզուն։

Ինչ միջոցներ ձեռք առաւ Արտաշիաս հայերէնը տարածելու համար։ Կը գրուէ՞ր հայերէնը, գրականութիւն կ'ընէ՞ր և կը կարդացուէ՞ր։ Բոլորն ալ հաւանական են և բնական հետեւանք իր հրամանին։

Այս միջոցին է որ կը հաստատուի երգիչներու շրջանակը։ Երգիչները Գողթն գաւառէն էին, զինիի և ուրախութեան հայրենիք։ Իրենց երգերը ո՛չ միայն զօրաւորագոյն միջոցն էր հայերէն լեզուն տարածելու, այլ նաև ազգային յիշատակները պանծացնելու։

Իրենց երգերը երկու դասի կը բաժնուին։ Կրօնական և պատմական։ Այս վերջինը կը կոչուէր նաեւ քառիսաց որ հին ատեն կը նշանակէր պատմական։ Երկու տեսակն ալ սահմանուած էին երգցուելու։ Իրենց նուազարանը կը կոչուէր բամբիրոն։ Կրօնական երգերէն մեզի մէկ կտոր միայն հասեր է, նուիրուած Վահագն Աստուծոյն, որ այրական առաքինութեանց դիքն էր։ Այս կտորին մէջ կը պատկերացուի վահագնի ծնունդը՝ շատ այլաբանական կերպով։ Յստակ հայերէն մը, պարզ, և տեսակ մը չափ ունի որ կը մօտենայ խօսակցութեան չափին։

Պատմական երգերու մէջ միմիայն դէպք մը երգուած էր, ինչպէս իլիականի մէջ

կամ Ոդիսականի։ Ազգային պատմութիւնն էր, ո՛ր և աչքի զարնող դէպք, պատեւրազմներ, քաղաքներու հաստատութիւններ, նոր գաղութներ, կիրքի զէպքեր, դուշագնեղութեան ոճով երգուած։ Եւ Գողթն երգիչներու այս շրջանակը՝ Արտաշիասի ատեն կազմուած, կը զօրէ և կը տարածուի այլ ևս հայ կենսերին մէջ։ անոր մէկ կարեւոր տարրը կը կազմէ։

Ինչպէս կրօնական երգերէն, պատմական երգերէն ալ, բնագրապէս, տոգեր և հատակոտորներ միայն ունինք։ Հնագոյն կտորը կ'ակնարկէ Արտաշիասի Արտաւազդ որդւոյն Մարակերտ շինելը, և վարդգէսի մը անաշնորդութեամբ եղած գաղութի։

Մղումը, զոր Արտաշիաս տուաւ հայերէն լեզուին, իրր ազգային միութեան ամենէն զօրաւոր կապը և իրր ամենէն ցայտուն գիծը հայ նկարագրին, նոյն ընդունելութիւնը չգտաւ իր յաջորդներուն ըով, որոնք ամէնքն ալ, թէև, այլապէս, խոր զգացմամբ հայ թագաւորներ եղան և ուսմանց մեկենասներ։ Անոնք իրենց նախախրութիւնը աւելի հելլէն կրթութեան տուին։ Տիգրան Մեծն, Թոռնորդի Արտաշիասի, ազատած Պարսից պատանդութենէն, ոչ միայն իր երկրին էր տիրէ, ոչ միայն Պարսից կը յաղթէ, այլ իր աշխարհակալութիւնները կը տարածէ մենչև Փոքր Ասիոյ շատ քաղաքներ և մինչև Ռոմնոս գետի ափերը։ Իր արշաւանքներովը, անմիջական ծանօթութեան եկած յոյն բարբերուն հետ, նա անոնցմէ կը փոխադրէ իր երկիրը, մեհհաններ ու արձաններ, քուրմեր, դերասաններ, ամբողջ քաղաքներու բնակիչներ։ Անոնց բնակութեան համար կու տայ ամբողջներ, մեհհաններ, կալուածներ, և կը հիմնէ քաղաք մը, Տիգրանականքը, ուր կը կառուցանէ յունական թատրոն մը։

Հելլենացած այս մթնոլորտին մէջ բնականաբար կը յայտնուին զրողներ՝ որոնք յունարէն լեզուն կը նախընտրեն։ Այս կարգէն, նշանաւոր ֆիսց, Մեծն Տիգրանի որդին, Արտաւազդ, ապերշնակ թագա-

տրբւոյն Հայրը իրեն զուտ յունական դաս տնտեսականութիւն մը տուած էր։ Շատ կը սիրէր յունական թատրը, և նոյն իսկ, երբ թագաւոր եղաւ, հաճութեամբ ներկայ կը գտնուէր Եւրոպիական ներկայացումներուն։ Զարդաւորութիւն կրած իր դիւանագիտութեան մէջ, գերի կ'իյնայ Հոռմայեցոց ձեռք, և շրջայակալ՝ Աղբըսան զրիւս կը տարուի, ուր բանտ կը ձգեն զինք։ Միտնաբարեւելու համար իր բանտի միայնութեան ու տխրութեան մէջ, նա կը գրէ ճառեր, պատմութիւններ, թատերգութիւններ։ Ասոնցմէ ոչ մէկ հաստակոտոր մեզի չէ հասած, և չենք գիտեր ինչ նիւթի վրայ էին այս ճառերը, պատմութիւնները, թատերգութիւնները։ Պիտաւորոս, որ զանոնք կարդացեր է, զանոնք գեղեցիկ գտած է։

Հոռմայեցիները որ Արտաշէսին ի վեր այնքան զօրաւոր ու վճռական յարարելութիւններ ունեցան մեր երկրին հետ, ոչ ինչ ազդեցութիւն չունեցան հայ բարքերուն և լեզուին վրայ։ Ազդեցութիւն ունեցան միայն քիչ մը քաղաքներու շինութեան և ճարտարապետութեան վրայ, ան ալ՝ աւելի ուշ։ Եւ յիշուի որ մէկը որ իրենց լեզուով ո՛ր է գրութիւն մը արտագրած ըլլայ։

Փողովուրդը, մեծ զանգուածը, միշտ զէպի պարսկական բարքերն ու լեզուն հակող տարբեր մնաց։

Եւ Տիրիթ — Արտաշէսի հետ, եղբայր Պարթեւաց Վաղարշակ Ա. թագաւորին, որ 66 տարւոյն յետ Քրիստոսի, Հայաստանի թագաւորութիւնը կ'ընդունէր՝ չեղած է Հոռմի մէջ, պարսկականութիւնը աւելի լայն ծաւալով մը կը տիրէ Հայոց մէջ, մանաւանդ քաղաքի ու ազնուական դասակարգին։ Այս անգամ պարսկական ազդեցութիւնը հին ձեւը չունէր, Արեւմտեան նեանց ձեւը։ Պարթեւական ձեւերն էին կեանքին և մանաւանդ լեզուին մէջ, որ այս շրջանին պարսկերէն բառերու թանձր խաւով մը կը բեռնաւորուի։ Հայերէն լեզուի մէջ եղած պարսկերէն բառերը մեծաւ մասամբ այս շրջանին են փոխ առ-

նուած՝ և պարսկերէնի պարթեւական ձեւին աւելի մօտ են։

Տիրիթ, ճոխ ու սեգ թագաւոր մը, կը յաջողի ոչ միայն սիրելի ընել Հայոց պարթեւական բարքերն ու լեզուն, այլ իր շուրջը և իր ամբողջ թագաւորութեան մէջ կը ստեղծէ կեանք մը ապահովութեան ու լիութեան։ Եւ երջանկութեան այս դրախտին մէջն է որ ծայր կու տան աւելի նուրբ զգացումները սիրոյ, բանաստեղծութեան և բարբոթութեան։

Եւ մեզի կը տրուի նոյն իսկ բանաստեղծի մը անունը, խուսափած ժամանակէն, կամ լաւ ևս յաղթած ժամանակի ժանիքներուն։ ու մենք այլ ևս չենք արձանագրեր երգերու կտորներ առանց անունի։ Մենք զանոնք կը հաւաքենք Վրոյրի շուրջը, Տիրիթի որդւոյն, որուն բանաստեղծի կատարելութիւնը մեզի նուիրական մնացեր է։

Վրոյր ոչ միայն ծանօթ եղած է իրմէ նախընթաց Գողթան երգիչներուն և տիրացեր է անոնց արուեստին, այլ և յառաջ տարեր է զանոնք, գրելով իր ժամանակի և իր հօր արքունեաց պատմութիւնը, շրջան մը որմէ ամենէն աւելի հատակոտորներ հասեր են մեզի։ Այս հատակոտորները կ'անկարկեն Տիրիթ — Արտաշէսի և Սաթենիկի տեսակցութիւնը, անոնց հարստեանց հանդէսներու նկարագիրէն զիծ մը, Տիրիթի պերճութիւնն ու աշխարհաշինութիւնը, Սաթենիկի անհաւատարմութիւնը, Տիրիթի եղբերգները, Տիրիթի և Սաթենիկի անդամակիւն Արտաշէս — Աշխարհարի բնաւորութիւնը, անոր տրտունջները, Տիրիթի անէծքը։

Վրոյրի շէշը քարձը է, պերճ և արքայական, Զափազանցեալ այլարանութիւններ ունի որոնք իր դարուն թիւեա դիւրաւ կը հասկցուէին։ Իր լեզուն ծանրաբեռնուած է պարսկերէն բառերով համեմատութեամբ Վահագնի երգի լեզուին որ բոլորովին անոնցմէ ազատ է։

Ձենք գիտեր թէ բոլոր գողթան երգերն ալ մուտք կը գտնէին արքունական կամ մեհակական դիւաններու մէջ, և՛ երեւի թէ

առաջինին մէջ կը պահուէին մասնաւորապէս դաշնադրութեանց և այլ կարգի պատկանող վաւերութեան, ինչպէս երկրորդին մէջ պատմութիւններ գրուած առանձին հակողութեան մը տակ, իսկ այն դէպքերը որ թիչ կը շահագրգռէին արքունիքը՝ անմիջապէս ժողովրդեան կը տրուէին, առանց մեծ մտատանջութեան մը ժամանակին և պարագաներուն:

Ժողովրդական բանաստեղծութեան ուրիշ երկու տեսակներ ալ այս ժամանակները շատ ծագած էին, ցոյցքը և միմուռը: Առաջինները հարսանեկան երգեր էին, մերթ շրտուցանող յանդիմութեամբ: Երկրորդները եղբերգներ էին, յանկարծաբանուած ձայնարկներէ, որոնք նշանաւոր մեղադրանքներու վրայ լալու և լացնելու արուեստն ուէին: Միմուռներուն մէջ ուշադրութեան կ'առնուէին մեղքերն կեանքը, սովորութիւնները, ճաշակը, և մանաւանդ արկածներ՝ եթէ ունեցեր էր անոնցմէ: Չայնարկները մասնաւոր փոյթ մ'ունէին իրենց տողերը նոյն յանգով վերջացընել, իրենք գտած էին որ այս կերպը աւելի յարմար էր արցունքները յորգորելու: Եւրջ մինչև 250 տարին Քրիստոսի, այս է ազգային մտաւորական վիճակը: Կայ ուրարտական շատ նուագած, մոռցուած ու բոլորովին այլայլած խաւ մը, հայականութիւն մը որ կը սկսի և կը ծուլուի: Հին պարսկերէնի ազդեցութիւն մը, զօրաւոր զարթում մը ազգային զգացման՝ տարածմամբ իր լեզուին, նուրբ և հատընտր յարում մը հելլեն դպրութիւններուն, ծանօթութիւն մը հռոմէական զօրութեան, և մեծ հոսանք մը պարթեւ լեզուին ու բարբերուն:

Այս բոլորին մէջ ժողովուրդը դեռ խոր և անկեղծ զգացումներ ունի առ Հայ Ողբի զոր կը կարծէ գտնել և պաշտել իր վիպասանութեան երգերուն մէջ:

Հ. Ն. ԱՆԴՐԻԿԻԱՆ



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

ԳՐԱԳԻՏԸ

Ինքնագրագացումի մարդն էր. հասարակ գրաշարի արհեստով՝ ազնուական գրականութիւնը կը մշակէ և Ռուսահայ ժամանակակից գրողներու նորագոյն շրջանին՝ պատկառելի մէկ դէմքը կ'ըլլայ:

1902 ին հետագրով մը՝ մասնակցեցայ գրուածելու իր գրական գործունէութեան քառասունամեայ յորելիանը. և հիմայ իր շիրմին շուրջ՝ մէկ քանի խօսք գրելու պարտականութիւնը կը զգամ, յարգելով այդ անձնաւորութեան մէջ, հայ բանաստեղծը և հայ ժողովրդական վիպասանը:

*
**

Աղայեան դողդոջուն քայլերով՝ կը մօտենայ գրական բեմին, ուր 1862ին «Մեղու» լրագրի միջոցով՝ կը հրատարակէ Օգնեք խղճելիք բանաստեղծութիւնը:

Ռուսահայերը՝ հանդէպ իրենց գրողներուն, շատ քիչ մեղադրելի են. անոնք աւելի ըմբռնող են յարգն իրենց գրական զէմքերուն. որով իրենց գրողները՝ բաղդը կ'ունենան մէկ քանի անգամ տպելու ցանուցը աշխատութիւնին, որով անոնք անծանօթ չեն մնար ընթերցող հասարակութեան: Աղայեանի երկերն՝ ստէպ տըպուած են. ես իմ քովս ունիմ Բաւառ տեղծորիսները 1890ին տպուած: Ձիւքը քննենք նախ իրը քերթող:

Ռուսահայ հին ու նոր գրողներուն համար՝ միշտ սիրելի է եղած աշուղային բանաստեղծութեան զրգուր ոճը. հայրունի երգերուն մէջ՝ այդ հոգիէն կաթեցնելով Հայաստանի ծաղիկներուն բոյրով զանգուած հմայքը, սրտազրաւ կ'ընեն իրենց քերթողական ձայնը: Ընդհանուր է այդ ոճը. ժամանակակից գրողներու գասակար-